## Արձանագրություն N 2-3

### ՀՀՔԿ-ԲՄԽԾՁԲ-26/3 ծածկագրով ՀՀ Շիրակի մարզի Աշոցք համայնքում նոր մարզադպրոցի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման խորհրդատվական ծառայության ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք.Երևան

06.07.2026թ.
ժամը 10:00

Մասնակցում էին՝

| | |
|---|---|
| Հանձնաժողովի նախագահ՝ | Ա. Զոհրաբյան |
| Հանձնաժողովի անդամներ՝ | Ա. Քոչարյան |
| | Հ. Գինովյան |
| | Տ. Կոմիտասյան |
| | Ս. Նունյան |
| Հանձնաժողովի քարտուղարի պարտականությունները կատարող՝ | Ա. Մանուչարյան |

### 1. Գնման ընթացակարգի մասնակիցների հայտերում արձանագրված անհամապատասխանությունների շտկման գնահատման մասին

---

(Ա. Զոհրաբյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ գնման ընթացակարգի մասնակիցներ «ԱՐՄՍՏՐՈՅ» ՍՊԸ-ի, «ԼՈՒՔ» ՍՊԸ-ի հայտերով ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում արձանագրված անհամապատասխանությունների մասին 02.07.2026թ. ծանուցվել է վերջիններիս՝ առաջարկելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգի) 41-րդ կետի պահանջների համաձայն՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները, ինչն էլ սահմանված ժամկետում արվել է նրանց կողմից:

*Ընդունվել է որոշում՝ կողմ -5 դեմ-0:*

### 2. Տվյալներ ընտրված և այդպիսին չճանաչված մասնակիցների վերաբերյալ

---

(Ա. Զոհրաբյան)

2.1 Հիմք ընդունելով ընթացակարգի մասնակիցների կողմից հայտերով ներկայացված փաստաթղթերը՝ «ԱՐՄՍՏՐՈՅ» ՍՊԸ-ի, «ԼՈՒՔ» ՍՊԸ-ի, «ՍԹԵՄ» ՍՊԸ-ի հայտերը գնահատվել են բավարար:

2.2 Կարգի 40-րդ կետի 7-րդ ենթակետի, գնահատող հանձնաժողովի կողմից ներկայացված գնահատման թերթիկների հիման վրա մասնակիցների հայտերը գնահատվել են հետևյալ կերպ՝

| Մասնակցի զբաղեցրած տեղ | Մասնակցի անվանում | Գնահատման արդյունքում ստացած միավոր |
|---|---|---|
| Ընտրված մասնակից | «ԼՈՒՔ» ՍՊԸ | 75.35 |
| 2-րդ տեղ | «ԱՐՄՍՏՐՈՅ» ՍՊԸ | 74.38 |
| 3-րդ տեղ | «ՍԹԵՄ» ՍՊԸ | 69.52 |

*Ընդունվել է որոշում՝ կողմ -5 դեմ-0:*

### 3. Պետական գնման պայմանագիր կնքելու որոշման վերաբերյալ

---

(Ա. Զոհրաբյան)

3.1 Հիմք ընդունելով սույն արձանագրության 2.2 կետով ընդունված որոշումը, ինչպես նաև «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերը՝ գնահատող հանձնաժողովը որոշեց անգործության ժամկետի ավարտից հետո պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել ընտրված մասնակից «ԼՈՒՔ» ՍՊԸ-ին:

*Ընդունվել է որոշում՝ կողմ -5 դեմ-0:*

### 4. Գնման ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը և վայրը հաստատելու մասին

---

(Ա. Զոհրաբյան)

4.1 Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել պետական գնման պայմանագիր կնքելու օրը ՀՀ քաղաքաշինության կոմիտեում, ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3, IV հարկ հասցեում:

*Ընդունվել է որոշում՝ կողմ -5 դեմ-0:*

Հանձնաժողովի

Նախագահ՝ ------------------------------ Ա. Զոհրաբյան

Անդամներ՝ ------------------------------ Ա. Քոչարյան

------------------------------ Հ. Գինովյան

------------------------------ Տ. Կոմիտասյան

------------------------------ Ս. Նունյան

Արձանագրությունը կազմեց հանձնաժողովի քարտուղարի պարտականությունները կատարող՝ ------------------------------ Ա. Մանուչարյան